ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՏՀՆՆ-ԾՀԾՁԲ-15/9-17-10 -23-17

«20» 05 2017թ.

ք. Երևան

<<ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը>>, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Շահնազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, <<**Այ Սերվիս**>> ԼՄԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Ա.Ավետիսյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների և N 4 հավելվածով սահմանված գնացուցակին համապատասխան:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և N 4 հավելվածով սահմանված գնացուցակին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր դատողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները. Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **170 600** (մեկ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Կատարողն ԱԱՀ վճարող չի հանդիսանում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25 դեկտեմբերի 2017թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ որոշումների ընդունության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուին կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման.

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել, մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (դնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի գործողության դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության դաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**<<Այ Սերվիս>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մնրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան Հ.Հակոբյան 3
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ գանձապետական գործառնական վարչություն	Հ/Հ 20500223677110001
ՀՎՀՀ՝ 02505983	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
	ՀՎՀՀ՝ 00124361
_____ **Ա.Շահնազարյան**	_____ **Ա. Ավետիսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«20» 05 2017թ. կնքված
N ՀՀՏՀՆՆ-ԾՀԾՁԲ-15/9-17-10-23-17 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների

Հ/հ չափ.	Ծառայության անվանումը	Չափման միավոր	գումար	Տեխնիկական բնութագիր
				Տպիչ սարքի վերանորոգում
1	Տպիչ սարքի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	դրամ	1400	HP LJ 1020 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2015N /քանակը՝ 1 հատ/, HP LJ 5550 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2035N /քանակը՝ 1 հատ/, 225dn /քանակը՝ 1 հատ/, Pro-400 /քանակը՝ 1 հատ/ տպիչ սարքերի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա
2	Տպիչ սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	16200	HP LJ 1020 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2015N /քանակը՝ 1 հատ/, HP LJ 5550 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2035N /քանակը՝ 1 հատ/, 225dn /քանակը՝ 1 հատ/, Pro-400 /քանակը՝ 1 հատ/ տպիչ սարքերի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում
				Պատճենահանող սարքի վերանորոգում
5	Պատճենահանող սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	17500	Canon IR 2525 /քանակը՝ 3 հատ/, Canon IR 2016 /քանակը՝ 1 հատ/ պատճենահանող սարքերի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում
				Սկաների վերանորոգում
7	Սկաների դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	դրամ	9500	HP Scanjet 5590 /քանակը՝ 1 հատ/, Kodak i1220 Plus /քանակը՝ 1 հատ/, 225dn /քանակը՝ 3 հատ/ սկաներների դիագնոստիկա և պրոֆիլակտիկա
9	Սկաների սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	6000	HP Scanjet 5590 /քանակը՝ 1 հատ/, Kodak i1220 Plus /քանակը՝ 1 հատ/ սկաներների սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում
				Համակարգչային սարքավորումների վերանորոգում
10	Համակարգչի սնուցման բլոկների վերանորոգում	դրամ	46000	HP Compaq DC Microtower 5800 /10 հատ/, HP Pro3500 /5 հատ/, HP ProDesk 400 G2 /5հատ/
11	Մոնիտորների վերանորոգում	դրամ	64000	Dell Monitor 17"-19" /10 հատ/, HP Monitor 17"-22" /10 հատ/

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից	20.12.2017թ

* Կատարողը ծառայությունները մատուցում է Միեր Մկրտչյան 5, 9-րդ հարկ 910 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02503983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Այ Սերվիս>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Հ.Հակոբյան 3
Հ/Հ 2050022367711001
<< Ինեկոբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00124361

Ա. Ավետիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 20 >> 05 20 17թ. կնքված
N ՀՀՏՀՆՆ-ՀՀԾՁԲ-15/9-17-10-23-13 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N չափ.	Ծառայության անվանումը	Տնտեսական դասակարգում	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	Տպիչ սարքի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	4252	-	-	-	-	-	Ըստ գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման անհրաժեշտության դեպքում կազմված գումար, բայց ոչ ավելի քան 170 600 ՀՀ դրամը:							
2	Տպիչ սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	4252	-	-	-	-	-								
5	Պատճենահանող սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	4252	-	-	-	-	-								
7	Սկանների դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	4252	-	-	-	-	-								
9	Սկանների սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով	4252	-	-	-	-	-								
10	Համակարգչի սնուցման բլոկերի վերանորոգում	4252	-	-	-	-	-								
11	Մոնիտորների վերանորոգում	4252	-	-	-	-	-								

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ գանձապետական գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա. Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Այ Սերվիս>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Հ.Հակոբյան 3
Հ/Հ 20500223677100 1
<< Ինեկոբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00124361

Ա. Ավետիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«20» 05 2017թ. կնքված
ՀՀՅՁՆՆ-ԾՀԾՁԲ-15/9-17-10-23-17 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը ______________

հ/հ ______________________________

____

հվհհ ______________________________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը ______________

հ/հ ______________________________

____

հվհհ ______________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«20» 05 2017թ. կնքված
N ՀՀՏՋՆՆ-ԾՀԾՁԲ-15/Դ-17-10-23-17 ծանուցագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու)
(Պատվիրատուի անունը)
և ----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախապատրաստող ներկայացուցիչ՝
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
ստորագրություն	ստորագրություն

Հավելված 4
«20» 05 2017թ. կնքված
N ՀՀՏՀՆՆ-ԾՀԾՁԲ-15/9-17-10 պայմանագրի

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների

Հ/հ չափ.	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Միավոր գին	Տեխնիկական բնութագիր
			Տպիչ սարքի վերանորոգում	
1	Տպիչ սարքի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	դրամ	1900	HP LJ 1020 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2015N /քանակը՝ 1 հատ/, HP LJ 5550 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2035N /քանակը՝ 1 հատ/, 225մր /քանակը՝ 1 հատ/, Pro-400 /քանակը՝ 1 հատ/ տպիչ սարքերի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա
2	Տպիչ սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	2700	HP LJ 1020 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2015N /քանակը՝ 1 հատ/, HP LJ 5550 /քանակը՝ 1 հատ/, HP LJ 2035N /քանակը՝ 1 հատ/, 225մր /քանակը՝ 1 հատ/, Pro-400 /քանակը՝ 1 հատ/ տպիչ սարքերի դիագնոստիկա և պրոֆիլակտիկա տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում
			Պատճենահանող սարքի վերանորոգում	
5	Պատճենահանող սարքի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	3500	Canon IR 2525 /քանակը՝ 3 հատ/, Canon IR 2016 /քանակը՝ 2 հատ/ պատճենահանող սարքերի վառարանի թերմոթաղանթի, ռետինե լիսեռի, թղթի բաժանարարի և թղթի անիվների վերանորոգում կամ փոխարինում
			Սկաների վերանորոգում	
7	Սկաների դիագնոստիկա և պրոֆիլակտիկա	դրամ	1900	HP Scanjet 5590 /քանակը՝ 1 հատ/, Kodak 1220 Plus /քանակը՝ 1 հատ/, 225մր /քանակը՝ 3 հատ/ սկաներների դիագնուտիկա և պրոֆիլակտիկա
9	Սկաների սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով	դրամ	3000	HP Scanjet 5590 /քանակը՝ 1 հատ/, Kodak 1220 Plus /քանակը՝ 1 հատ/ սկաներների սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում
			Համակարգչային սարքավորումների վերանորոգում	
10	Համակարգչի սնուցման բլոկների վերանորոգում	դրամ	2300	HP Compaq DC Microtower 5800 /10 հատ/, HP Pro3500 /5 հատ/, HP ProDesk 400 G2 /5հատ/

11	Մոնիտորների վերանորոգում	դրամ	37000	Dell Monitor 17"-19" /10 հատ/, HP Monitor 17"-22" /10 հատ/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատանքային
գործատուների վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

_____ Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Այ Սերվիս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Հ.Հակոբյան 3
Հ/Հ 2050022367711001
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00124361

_____ Ա. Ավետիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.